Քաղվածք

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից

Երևան, 18 նոյեմբերի 2019թ.

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2019թ. նոյեմբերի 18-ի նիստում քննարկեց դատախազ Ն. Խ.-ին արտահերթ կարգով դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությունը:

Հաշվի առնելով հարցազրույցի արդյունքները և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով, ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 12-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Ն. Խ.-ին «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու համար: